PK
8999
X 484

Digitized by Google

THE LIBRARY
OF
THE UNIVERSITY
OF CALIFORNIA
LOS ANGELES

Digitized by Google

ԴՐ. Ե. ՓՐԱՆԳԵԱՆ

ՀԱՑ ՄԻՏՔԸ

ՎԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԷՐԸ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑՐԻԿ

ԹԷՀՐԱՆ

1919

Digitized by Google

Digitized by Google

ԴՐ. Ե. ՓՐԱՆԳԵԱՆ

ՀԱՅ ՄԻՏՔԸ

ՎԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԷՐԸ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԹԷՀՐԱՆ

1919

Digitized by Google

Digitized by Google

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՄԱՍՏԱՍԷՐԸ

I

Հայ իմաստասէրը.—Խրիմեանը բնածին հանճար.—Նա հայածին էր.—Նա բարոյական դէմք էր, գիտութեան դէրվիշ.—Նա մեծ և ամբողջական մարդ էր։

Ամեն անգամ, երբ խօսք է լինում Խրիմեանի մասին, երբ թերթում եմ նրա այս կամ այն գրուածքը և կամ ծանօթանում նրա կեանքի այս ու այն շրջանի հետ, միշտ իմ աչքի առաջ պատկերանում է հայ իմաստասիրի կերպարանքը, նման յոյն իմաստասէրների, մի Սոկրատի, մի Պլատոնի և այլն։ Եւ թւում է, թէ հայ աշխարհում, մեր կեանքի և գրականութեան մէջ, չկայ մէկ ուրիշը, որին այդ որոշիչը այնքան յատկանշական լինէր, որքան Խրիմեանին։

Յոյն իմաստասէրների նման, Խրիմեանն էլ շրջում էր անդադար, երևում հայ աշխարհի այս կամ այն անկիւնը, հաւաքում իր շուրջը աշակերտները,

1528874

Digitized by Google

ուսուցանում կեանքի իմաստութիւնը, տարածում լոյս ու գիտութիւն, բերում ժողովրդին ինքնագիտակցութեան և ցոյց տալիս կեանքի ուղիղ ճամբան։

Նա մի անգամ յայտնւում է Վարագում, հաւաքում Վասպուրականի երիտասարդներին, հիմնում դպրոց, նման Պլատոնի, Սոսայի դպրոցի, տալիս կեանքի դասեր, վառում գիտութեան ջահը։

Մէկ էլ նա երևում է պատմական և գեղեցիկ Տարօնում Ս. Կարապետի վանքում։ Մի աննման և աննախընթաց աշխատէր այդ, լոյսի և գիտութեան սրշաւ, որ տեղի ունեցաւ 1862 թ։ին։ Խրիմեանը իր հետ վերցրել էր մամուլ, տպագրական մի շարք անհրաժեշտ պարագաներ, գրաշարներ, ուսուցիչներ և այլն։ Եւ այդ կարաւանը յաղթական ցարժուեց Վարագից Տարօն։ Այստեղ ևս նա բարձրացրեց գիտութեան և լոյսի ջահը, վառեց երիտասարդների սիրտը։

Եւ այսպէս նա անընդհատ շրջում էր հայ աշխարհը։ Այս էր նրա բնական և վեհ կոչումը։ Եւ առանց պատճառի չէ, որ նրան կոչում են արևելեան դէրվիշ, թափառական դէրվիշ, նման այն դէրվիշի, որ անդադար շրջում է, քարոզում մաքրարէի խօսքը, հնչեցնում կեանքի իմաստութիւնը։ ,,Խրիմեանը մատաթիպարն է մի բարձր քահանայի։ Նա մի կերպարանք է, որ դուրս է գայլում ուղղակի Հին Կտակարանից աստուածաշնչային կրակովն և բոլոր բանաստեղծութեամբը''։ Այսպէս է բնորոշում Խրիմեանին մի եւրոպացի մարդ, Լինչը։

Խրիմեանը մի բնածին հանճար էր, իր դարի

Digitized by Google

հանճարներից մէկը։ Այն, ինչ նա բարոզում էր, նրա խմաստութիւնը—արհեստական չէր, անհոգ, վերացական կերպով ձեռք բերուած, խորթ և օտար նրա հոգու համար։ Այդ ամենը ինքնարուղիս էր, ինքնածին, իր անհատական ապրումների, դիտողութիւնների, փորձի անմիջական արդիւնք։

Խրիմեանը զարմանալի ինտուիցիայի տէր էր, բացառիկ օրինակ մեր իրականութեան մէջ։ Ինտուիցիայի, անմիջական հայեցողութեան միջոցով է նա ձեռք բերել իր ամբողջ դիտութիւնը, խմացականութիւնը հայ աշխարհի, մարդկութեան և իրերի մասին առհասարակ։ Հէնց դրանումն է Խրիմեանի մեծութիւնը, նրա դրաչութիւնը։

Վատրաբանի Արծիւը միաժամանակ հայածին էր, հարազատ հայ՝ իր խոհերով և ձգտումներով. իր տենչերով և իղձերով. կարճ, նա հայ էր իր ամբողջ էութեամբ։ Հայ կեանքի և իրականութեան, հայ ժողովրդի և պատմութեան խմաստութիւնն է խօսում նրա բերանով։ Նրա խմաստութիւնը օտարբոյս չէ, արհեստական կերպով պատաստուած, այլ հայ հարազատ հողի վրայ աճած, և հէնց այդ իսկ պատճառով էլ հայրենի հողի մէջ խոր արմատներ է ձգել։ Ոչինչ չկայ օտար հայ իրականութեան համար, վերացական կերպով կառուցուած։ Նրա ամեն մի խօսքը հայ կեանքի անմիջական թելադրութիւնն ու արդասիքն է։

Այդ իսկ պատճառով էլ Խրիմեանը մեծ է։ Նա չէր այցելել դիտութեան տաճարները, համալսարան և ոչ էլ միջնակարգ դպրոց։ Բայց նա այցելել էր

Digitized by Google

կեանքի կենդանի կաճառը, սովորել էր կեանքի դպրոցում, որ աւելի դժուարին, լայց և՝ աւելի բեղմնաւոր է, քան միւս կաճառը։ Վանի մեծ իմաստասէրը միայն կեանքը ,,մտիկ ընելով'' ուսած էր և դուրս բերած իր իմաստութիւնը։ Այս է ասում նա ,,Պ ա պ ի կ և Թ ո ն ի կ''-ի մէջ։

Խրիմեանը բ ա ր ո յ ա կ ա ն մ ի մ ե ծ դ է մ ք էր, թերևս եզակի հայ աշխարհում, պարզ և բիւրեղ, պարզութեան և ճշմարտութեան քուրմ։ Նա վարչական մարդ չէր և ոչ էլ դիւանագէտ։ Այդ տեսակէտից նա ճիշտ բնորոշեց իրեն Բեռլինի Վեհաժողովում։ Եւ նրա կաթողիկոսութիւնը պիտի համարել մի թիւրիմացութիւն, մի վրիպում նրա կեանքում։ Դրա մէջ չէր, և այդտեղ չպէտք է որոնել, նրա մեծութիւնը, նրա հմայքը։ Ընդհակառակը, կաթողիկոսանալով նա մի յայտնի չափով նւաստացաւ, որպէս բարոյական հեղինակութիւն, մտքի և հոգու մեծութիւն։ Բնածին առաքեալը և գիտութեան դէրվիշը ծնւած չէր վարչական գործունէութեան համար։ Այսպէս պէտք է նայել Վասպուրականի Արծուի վրայ. այլապէս անկարելի է պատկերացնել և հասկանալ նրա մեծութիւնը։ Նրա կոչումն էր ազատ սաւառնել հայ աշխարհի վրայ, ամենուրեք քարոզել և տարածել իմաստութիւն, լոյս և գիտութիւն, ժողովրդին առաջնորդել դէպի բարոյական և բնական կարգեր, դէպի շիտակ քաղաքակրթութիւն, մաքուր բարքեր։

Նա մեր կեանքի ամենամեծ վերածնիչներից մէկն է, թէև հոգևորական...

Այդպէս է երևում մեզ Մկրտիչ Խրիմեանն ամեն տեղ և ամեն ձևի մէջ։ Նա բարոյախօս և ժողովրդի առաջնորդ է և՝ իր հրապարակախօսական գրւածք-

Digitized by Google

ներում, ցրված ,,Ա ր ծ ի ւ Վ ա ս պ ո ւ ր ա կ ա ն ի'' էջերում, և՛ գիտական աշխատութիւնների ու առօրեայ զրոյցների մէջ և՛ իր հռչակաւոր սրամիտ ու իմաստալից քարոզների ու հետաքրքրական նամակների մէջ։ Նա ամեն տեղ վառվռուն Հայրիկն է, հայ ժողովրդի առաջնորդը։ Նրա իւրաքանչիւր աշխատութիւնը, օրինակ՝ ,,Ժամանակ և խորհուրդ իւր'', ,,Պապիկ և թոռնիկ'', ,,Սիրաք և Սամուէլ'', մի մի գերազանցապէս փիլիսոփայական-բարոյագիտական գործ է, կեանքի իմաստութիւն և առաջնորդութիւն։ Երիմեանն անգամ իր առօրէական կեանքում, ամենասովորական խօսակցութիւնների միջոցին, իր սրամիտ կատակներում բարոյախօս էր, կեանքի դասեր ուսանդող։

Եւ այդպէս թարմ, կենսալից և հետաքրքիր մնաց նա մինչև խորին ծերութիւն, մինչև մահ։

Մեծ հայրենասէր լինելով, նա միաժամանակ խ ո շ ո ր մ ա ր դ է՝ լրիւ և ամբողջական. Նա ունէր լայն սիրտմեծ հոգի, քրիստոնեայի անհատնում համբերութիւն։ Զկայ որև է կեղծ շեշտ և գիծ նրա գրքուածքներում և կեանքում։ Եւ եթէ նա պահանջում և քարոզում էր յ ե տ գ ն ա լ դէպի բնական և բարոյական օրէնքներն ու կարգերը, այդ բղխում էր անմիջապէս նրա էութիւնից։ Բարոյականը և բնականը այդ մարդու մէջ ի մի էին ձուլուած, մի ներդաշնակ ամբողջութիւն կազմում։ Այս տեսակէտից նրա կեանքից և գործունէութիւնից բնական ձևով բղխում է մի ամբողջական և գեղեցիկ վարդապետութիւն, մի միաձոյլ աշխարհայեցողութիւն, թէև երբէք նա չի աշխատել այդ ուղղութեամբ, երբէք չի աշխատել սիստեմ տալ։

Digitized by Google

II

Խրիմեանի աշխարհայեցողության հիմնական և ընդհանուր գծերը — ,,Ժողովուրդ'' հասկացողությունը — Խրիմեանը ռամկավար — Աշխատանքի նկրտումը — Խրիմեանը գիւղացիության իդիոլոգ — «Հող և ազատություն» լոզունգը։

Լինելով ժողովրդի հարազատ զաւակ, Խրիմեանի մտածումների, ճիգերի և իմաստության առարկան էր հենց այդ մայր-ժողովուրդը։

,,Ժողովուրդ'' հասկացողությունը, անկասկած, խիստ առաձգական է, բայց Խրիմեանի համար այդ գաղափարն ունէր իր պարզ ու որոշ իմաստը և բովանդակությունը։ Ժողովուրդ ասելով նա հասկանում էր մարդկության աշխատաւոր մասը, որ ամենից շատ է աշխատում, բայց ամենից քիչ վայելում այս աշխարհում, որ միշտ հաբստահարուած և իրաւազուրկ է։ Խօսելով ժողովրդի մասին, նա միշտ էլ ինկատի ունէր ,,շինական'' ժողովուրդը, դաշտաբնակ ,,մշակ'' ժողովուրդը։ ,,Դաշտային գիւղերու բնակիչ աշխատաւոր և հայ վան-

Digitized by Google

տակող մշակ՝ ժողովուրդն է՛՛[1]։) Այսպէս է նա բնութագրում ժողովուրդ հասկացողութիւնը։ Եւ ահա-սաբեակ նրա ամեն մի աշխատութիւնը գրուած է ժողովրդի համար, ,,մշակ՛՛ և գիւղացի ժողովրդի համար։ Նրա գրուածքներում, անդամ հրապարակա-խոսական յօդուածներում, այդ ընդհանուր դիծն է, այդ ոգին է տիրապետում։

Ժողովուրդը, աշխատաւոր ժողովուրդը մի բառ՝ անդամ գերագոյն արժէք է Վանի իմաստասէրի հա-մար։ Ժողովուրդն է մարդկութեան հիմքը, „բուն արմատ և մայր ամեն կոչոցի և էիճակի մարդոց“։ Ժողովուրդն է „աշխարհիս մեծագոյն շինարար մա-սը“, ժողովուրդը «աշխատութեան մայրն է»[2])։ Ժո-ղովուրդը միաժամանակ մարդկութեան ստեղծագործ ոյժն է, նրա սիւնը, որ եթէ մի բոպէ դադարէ գո-յութիւն ունենալուց, կը խախտի նաև աշխարհա-շէնքի հիմքը։

Վասպուրականի մեծ բարոյագէտը աշխատաւոր ժողովրդի, գիւղացիութեան ազնիւ իդիոլոգն է, նրա շահերի և իրաւունքների անբեր ու համոզուած պաշտ-պանը, նրա անկեղծ բարեկամը, վերջապէս, նրա ,,հ ա յ ր ի կ ը՛՛։ Ոչ մէկի համար այնպէս բնորոշիչ չէ այդ յատկանիշը, որքան Մկրտիչ Խրիմեանի հա-մար — ժ ո ղ ո վ ր դ ի հ ա յ ր ի կ ը։ Այլ կերպ էլ ,,մշակ՛՛ ժողովուրդը չի ճանաչում Վասպուրականի Լրծուին։

---

1) Սիրաք և Սամուէլ, էջ 68

2) Սիրաք և Սամուէլ, էջ 68-99

Digitized by Google

Խրիմեանը ռամկավար էր, ազնիւ և համոզուած ռամկավար։ Նա իր ամբողջ կեանքում անսայթաք հետեւեց ռամկավարութեան, միշտ էլ բարձր պահեց ,,ռամիկի'', այդ արհամարուածի պատիւը, այդ ,,մայր-աշխատաւորի'' արժէքը։ Բայց նա չի քարոզել միայն, այլ և կեանքում, գործի մէջ ցոյց է տուել։—Պատմում են, թէ ինչպէս մի անգամ Գ. Պոլսում ամիրաները, ազգի ջօջերը այցի են գալիս պատրիարք Խրիմեանին, բայց վերջինս մերժում է նրանց ընդունել, որովհետև այդ ժամին նրա մօտ կային ,,մշակներ''։ Անկասկած, ազգի ,,մեծերի'' համար անհասկանալի էր այդ երևոյթը և նրանք դայրութով, սև ոխով լցուած՝ հեռացան պատրիարքարանից, դաւնալով նրա թշնամիները։

Բայց մեծ ժողովրդասէր հողևորականը մի նշանախեց անգամ չփոխեց իր ընթացքը, իր ռամկասիրութիւնը։ Եւ չէր էլ կարող փոխել, որովհետև այդ նրա խորին համոզմունքը, նրա էութիւնն էր կազմում։

* * *

Խրիմեանի աշխարհայեցողութեան այս հիմնական գրութեան հետ անբաժան կերպով կապուած է մի բարձր գաղափար՝ աշխատանքի սկզբունքը։ Խրիմեանը գնում է աշխատանքի պաշտամունքը. աշխատանքը ստեղծագործ է, աշխատանքը ազնուացնող է։ Այսպէս բարձր է նա գնահատում աշխատանքը։

Digitized by Google

Բայց այդ ևս լոկ քարոզ և վերացական բան չէր նրա բերանում։ Նա ինքը կեանքում մի աղնիւ աշխատաւոր էր միշտ։

Աշխատանքը էլ աւելի բարձր իմաստ ունէր մշակ ժողովրդի Հայրիկի համար։ Աշխատանքը մարդուէութիւնն է կազմում, մարդու էական յատկանիշը։ Մարդն իր աշխատանքով է միայն մարդ։

Խրիմեանը աշխարհը նմանեցնում է մի մեծ աղարակի, և մարդը այդ աղարակի մէջ մի գործաւոր մշակ է։ Նա քանի կեանք ունի, պարտաւոր է անդադար աշխատել, առաջ տանել երկրի մշակոյթը, արդիւնաւորել աշխարհը, այդ մեծ աղարակը։ Այս է մարդու կոչումը։ Զեղել այս ուղիից, չկատարել իր այս կոչումը, նշանակում է մարդ լինելուց դադարել։ Աշխատանքը մարդու «կեանքը արդիւնաւորող Աստծու օրհնած սերմն է»[1]։ Կարճ, աշխարհը և ամեն ինչ դրուած է ստեղծագործ աշխատանքի վրայ։

Առանց աշխատանքի կեանքը և՛ դադարել է և՛ անիրաւ։ Իւրաքանչիւր մարդու բարոյական և բնական կոչումը աշխատանքն է։ Ամեն մի մարդ պէտք է ապրի իր սեփական աշխատանքով և աչք չունի ուրիշի աշխատանքի վրայ։ Այս էր քարոզում և բարոյախօսում Խրիմեանը։ «Զվաստակս ձեռաց քոց կերեսցես, երանի քեզ և բարի եղիցես»։ ,,Զգուշացիր, խրատում է Խրիմեանը, կամիլ մի ուրիշի ճակտի քրտինքէն չխառնես քո քրտնաց հետ»։ Ըստ մեր բարոյականի, արդար է միայն այն մարդը, որ իր

[1]) Սիրաք և Սամուել, էջ 84.

սեփական աշխատանքով, իր «քրտնաց հացով» կապրի; իսկ «անիրաւ է այն մարդը, որ առանց աշխատութեան ուրիշի քրտնաց հացը կուտէ լի ղրկանքներով»1):

Եվ աշխարհը այս բարձր և արդար սկզբունքի վրայ դրուած լինէր, միանգամայն առաքինի կունենար, բան այժմ ունի նա։ Այժմեան աշխարհը, հայկական և ընդհանուր, շեղել է այս ճամբից։ Բնական և արդար աշխարհը չէ այս.—աշխատաւորը մշակ դիւղացին իր ճակատի քրտինքի, իր հալալ աշխատանքի տէրը չէ։ Արդի աշխարհի ամենավիրաւոր և անիրաւ կողմն է այս։ Խրիմեանը ճանաչում է երկու մեծ դասակարգ.—մի կողմ կանգնած է մշակ ժողովուրդը, որ իրաւազուրկ է միանգամայն և անզգայ հարստահարւում է, իսկ միւս կողմում կանգնած են իրաւասէրները, հարստահարողները, ճնշողները, բոլոր նրանք, որոնք չեն աշխատում և ապրում են ուրիշի աշխատանքով։ Հայ բարոյագէտը ցաւով է յիշատակում մեր անիրաւ աշխարհի այս անիրաւ կաբդը ու իրավիճակները, որ մշակ ժողովուրդը «զօր հանապազ չարաչար կը տրնի և քրտինք կը թափի մարդկային յաւաջադիմութեան համար, բայց նա իր յաւաջ բերած արդիւնքին խիստ հեռաւոր և յոսի մասը էր վայելէ»2)։ Զկայ աշխատանքի և վայելքի հաւասար ու արդար բաշխում, ինչ կամենում և քարոզում է Խրիմեանը։ «Երանի թէ իրաբանչիւր մարդոց աշխատութեան հաց՝ իր բնաբանը

1) Պապիկ և Թոռնիկ, էջ 3.
2) Սիրաք և Սամուէլ, էջ 71։

Digitized by Google

հանելը, զի մարդիկ կան, որ բիւրաւոր մարդոց աշխատութեան հաց իրենք կուտեն՝՝:

Եւ այդ հարստահարողները, առանց քրանքի վայելողները, կազմում են մարդկութեան փոքր, ամենաչնչին մասը, մինչդեռ հարստահարուածների, ,,զրկեալների դասը ամենամեծ մասն է, և անչափելի են այն բազմապիսի զրկանքներ, որ կլինեն արեւուն տակ, աշխարհս վրայ՝՝ և որ ենթարկւում է մարդկութեան այդ մեծագոյն, աշխատաւոր բազմութիւնը:

Խրիմեանը միշտ էլ պաշտպանել է ժողովրդի շահերը, պայքարել ժողովրդի իրաւունքների համար, կուել տիրող անարդար կարգերի դէմ և հաւասարութեան ու ճշմարտութեան, աշխատանքի և վայելքի հաւասար բաշխման համար: Թէև հոգևորական, բայց նրա կեանքը եղել է մի դեղեցիկ պայքար, նա հանդիսացել է մեր հասարակական կեանքում մի անհման մարտիկ:

* * *

Հողն է մարդու, աշխատաւոր մարդու զոյութեան առաջին և գլխաւոր հիմքը:

Այս է գիւղացիութեան ամենու իդէալոգի մի հիմնական թեզիսը, որ անմիջապէս և արտաքանօրէն բղխում է այն բոլորից, ինչ մինչև այժմ ասւեց:

Ժողովրդի „հարստութեան առաջին և մշտնջենաւոր աղբիւրը հողն ու երկիրն՝՝ է[1]), ասում է Խրիմեանը: Բայց հողի հետ անրաժան կերպով կապուած է աշխատանքը: Հողը արդասաւոր է դառ-

[1]) Սիրաք և Սամուէլ, էջ 90.

Digitized by Google

նում միայն մարդու աշխատության հետ միասին։ Այդ երկու ոյժի միացած գործն է միայն ստեղծագործական։ Հող և աշխատանք — ահա գլխաւոր գործոնները մեր մշակոյթի։

Հետևողական իր այս ընդհանուր տեսակէտին, նա մեր աղքատության աղբիւրի մի ակն «անաշխատ ձեռն» է համարում։ «Երկրագործության» նշանաւոր հեղինակի, Միքայել Նալբանդեանի և Խրիմեանի հայեցակէտերի մէջ այս տեսակէտից զգալի նմանութիւն կայ։ Մեր կեանքի և գրականութեան այս երկու վեստերանները, Նալբանդեան և Խրիմեան, ներկայանում են միևնոյն իդէոլոգիայի ներկայացուցիչներ, երկրագործության և գիւղացիության իդէոլոգներ։ Խրիմեանի «Պապիկ և թոռնիկ» աշխատութիւնը, որ գրւած է յատկապէս գիւղացի, մշակ և հողագործ ժողովրդի համար, հողի գեղեցիկ երգն է, մի ամբողջ ներբող։ «Սիրելի գիւղացի ժողովուրդ, քեզ համար գրեցի այս գիրքը, որ դու քո հայրենատեր հողն ու գաշտը սիրես և երբէք չբաժանես»։ Նա յորդորում է սիրել հողը, որովհետև գիւղացու կեանքը ,,հողն է և հողագործության արդար և հալալ վաստակ''։ ''Օրհնեալ է հողն ու սերմեր, օրհնեալ՝ մշակի եղնամոլներ''։ Նա ներբող է կարդում հողի հասցէին և յորդորում է գիւղացիությունն զէպի երկրագործութիւնը, որովհետև ,,աշխարհիս բովանդակ մարդոց սնունդ և կեանք հողագործության արդիւնքն է''։ Սիրիր հողը, նա ազատ է միշտ՝ ,,կենաց և թէ մահու օրը''։ Խրիմեանը խրատում է չբաժանել մայր-հո-

Digitized by Google

դից, չլքել և չծախել նրան, այլ ընդհակառակը, փայփայել, մշակել և արդիւնաւորել։ Թոռնիկը թէև ամուսնացած էր, բայց պապիկը էր կին ամուսնացնում է նրան։ Տարբեր ամուսնութիւն է այս և խիստ բնորոշ Խրիմեանի աշխարհայեցողութեան համար։— ,,Սիրելի թոռնիկ, դու մի կարծիր, որ եկեղեցու կամ քահանայի պսակ քեզ բաւական է։ Լծեցէք զուգան, դու տես հիմի, թոռնիկ, թէ ինչպէս պիտի պսակեմ զքեզ։ Գնա նախ զոմէշներուն և եղներուն ճակատները համբուրէ, արի զուգանին մաճին քով խոնարհիր գետին՝ մայրենի հող համբուրէ, ձեռքս մաճին վրայ դրած եմ, համբուրէ պապկէ ձեռք և մաճ.. ահա քառասուն տարուան մաճկալ պապիկ, այսօր քեզ կը յանձնէ մաճկալութեան վսեմապոյն պաշտօնը''1) (ընդգծումն իմն է Ե. Ֆ.)։ Եւ պապիկը թոռնիկի ղլխին գնում է ,,ցորենաբոյսից շինած մի գեղեցիկ պսակ'' և կտակում է, որ երբէք թոռնիկը չըվերցնի այդ պսակը, և երբ կը ծերանայ, այդ պսակը գնի իր անդրանիկ որդու ղլխին ու այսպէս անընդհատ ժառանգաբար... Նա պսակում է թոռնիկին հողի հետ, զուգանի հետ, դաշտի մշակութեան հետ...

Ահա այսպէս բարձր իմաստ ունէր այդ խորհրդաւոր պսակը։

Հողի և հողագործութեան մէջ անհամեմատ կրօնաւորբարոյապէտը մի այլ խոր իմաստ, բարձր արժէք ևս տեսնում էր և գնում։—Նա թոռնիկին պսակելով հողի հետ, յորդոր է կարդում՝ պինդ գրկել հողը և թոյլ չտալ, որ ուրիշները ձեռքից յափշտակեն և նա

1) Պապիկ և թոռնիկ, էջ 49.

Digitized by Google

անհոգ մնայ, „սրուկ գանայ“, երթայ ուրիշի գոներ վարձկան մշակ դառնայ[1]: Այսպէս, հողի գաղափարի հետ կապուած է նաև ազատութեան գաղափարը, ազատ, մարդավայել կեանքի հասկացողութիւնը: Հողը մարդու գոյութեան և ազատութեան հիմքն է, յենարանը: Հող և ազատութիւն— մէկը առանց միւսի անհասկանալի է: Ռուս նարոդնիկական-սոցիալիստական դպրոցի գլխաւոր լոզունգն է այս: Բայց Խրիմեանը այդ պահանջը չի վերցրել ռուս մտածողներից, այլ մեր հարազատ կեանքի և իրականութեան արդիւնք է: Եւ Խրիմեանը մշտապէս պայքարել է զատուած հայերի ազնիւութեան դէմ, երբ լրել են իրենց հայրենի հողը և գնացել հեռաւոր երկրներ, Կ. Պոլիս և այլուր, և այսպիսով կորցրել են իրենց ազատութիւնը, մարդկային արժանաւորութիւնը, դառել են տարուկ և ուրիշների մօտ ծառայ:

Հողին և երկրագործութեան, առհասարակ գիւղական ազատ անտես լինելը, այդպէս մեծ և առաջնակարգ դեր և նշանակութիւն վերագրելով, Խրիմեանը իր գործունէութեան ընթացքում անդադար աշխատում էր բարեփոխել տիրող անիրաւ պայմանները, երկրագործութիւնը բարձրացնել նահապետական դրութիւնից: Այդ հողևորականն է առաջին անգամ Հայաստանի դաւառը մտցրել եւրոպական երկրագործական գործիքներ, ցոյց տուել ժողովրդին կատարելագործուած միջոցներով մշակել հողը: Նոյնը և արհեստների վերաբերմամբ: Ուր Խրիմեանը

[1] Պապիկ և թոռնիկ, էջ 152.

ոտք էր դնում, իսկոյն վառում էր կրթության և դիտության ջահը, դնում դպրոցի հիմքը։ Բայց Խրիմեանի հիմնած դպրոցի անբաժան մասը կազմում էին արհեստները, երկրագործական գիւղատնտեսական բաժինը։ Այդպէս էր նա Վարագում, այդպէս էր նա Տարօնում (Ս. Կարապետ)։ Միշտ էլ այս երկուսը, հոգ և դիտութիւն, անտեսականը և բազաբակրթութիւնը մի ներդաշնակ միութիւն, մի անբաժան ամբողջութիւն են կազմել նրա համար։ Մէկը առանց միւսի չի կարող լինել, մէկը առանց միւսի թերի է, անառողջ։ Նրա հոգին միշտ էլ հրճւում էր, երբ տեսնում էր այդ միասնական, այդ առողջ աշխատանքը։ Խրիմեանի խորին համոզմունքով, առանց անտեսական ապահովութեան, առանց արհեստի և գիւղատնտեսական բաժնի, մենք նոր սերնդից կը պատրաստենք միայն „ուսումնական թշուառներ“։

Խրիմեանը իր հոգի երգը վերջացնում է մի կտակով, որ միանգամայն բնորոշ է նրա աշխարհայեցողութեան, նրա մտորումների և կենսահայեցողութեան համար։

„Ես կմեռնեմ, թոռնիկ, դիս տարէք թաղեցէք մեր պատով արտի մէջ, որ գերեզմանոցի մօտ է։ Գերեզմանս փորել տաք արտի մի բունջ, ուր բարդի, ուռենի ծառեր կան։ Այնտեղ շատ եմ նստել և հանգստացել„ [1])։

---

[1]) Պապիկ և թոռնիկ, էջ 207.

III

Ինչ է աշխարհը, կեանքը և մարդը.—Խրիմեանը հակամիլիտարիստ և «Թագաւորաց ժողով» պիեսը.—Այս աշխարհի դարմանը.—Խրիմեանը հակատոհմանպրական։

— —

Մի այլ ապրակ, որ, հոգից և աշխատանքից դատ, գերազանցապէս ապրում է և մեծապէս դեր է խաղում աշխարհում, քաղաքակրթութիւնն է։

Հոգից յետոյ, նկատում է Խրիմեանը, մարդու հարստութեան երկրորդ ամենամեծ աղբիւրը գիտութիւնը և արուեստն է, որ նոր հարստութիւններ է երևան բերում։

Այս էր Խրիմեանի համոզումը, և այդպէս էլ նա միշտ գնահատում էր կեանքում։ Այդ երկուսը նրա համար միշտ էլ անբաժան էին միմեանցից։ Բայց քաղաքակրթութիւն ասելով՝ նա հասկանում էր շիտակ, ճշմարիտ քաղաքակրթութիւնը՝ գիտութիւնը և լոյսը։ Այդպիսի քաղաքակրթութիւնն ահա մեծ դեր ունի աշխարհի և մարդու կեանքի բարեփոխման գործում, ազնուացման և բարձրացման մէջ։

Իսկ ինչ է աշխարհը, ինչ է կեանքը և ինչ՝ մարդը.

Digitized by Google

Խրիմեանը ներկայանում է թէ իբր յոռետես, և թէ լաւատես։ Շատ մտածողների, բարոյագէտների և սոցիալ-փիլիսոփաների աշխարհայեցողութիւնը և կենսահայեցողութիւնը կրում է այդ կրկնակի բնոյթը։ Ինչպէս, օրինակ, մի Ժան-Ժակ Ռուսսօի։ Սա յոռետես էր ներկայ կարգերի հանդէպ, իսկ լաւատես՝ ապագայի վերաբերմամբ։ Ճիշտ այդպէս է նաև Խրիմեանի վերաբերումը և կենսահայեցողութիւնը։ Ներկայ աշխարհը վատ է. վատ է ոչ միայն հայ աշխարհը, այլ աշխարհն ընդհանրապէս։ „Ներկայ քաղաքակիրթ աշխարհը վատ է", անվերապահ յայտարարում է Խրիմեանը։ Իսկ ինչու է վատ։—Որովհետև նա թողել է «արդարութեան իրաւախոհութիւնը», միայն «կռիւ, սուր ու թնդանօթ ի գործ կրդնէ, արիւնով կը լանայ կեանքը։ Այդ հրազէն սպանիչ գործիքները իբրև արդարութիւն ի գործ կրդնէ»[1]։ Այդպէս է նաև արդի քաղաքակրթութիւնը. նա դեռ ևս մահ է բերում, "դեռ մարդոց համար սպանութեան գործիքներ կը հնարէ»։ Աշխարհիս տիրապետներ և դիւանագէտներ քուն և հանգիստ չունեն. վիշապի նման տուտի վերայ կեցած կը ֆշշան, կը սպառնան և ինչ կինդրեն—պատերազմ, անշուտ զիրար կլանելու համար»։[2])

Խրիմեանը անվերապահ և անպայման հակամիլիտարիստական էր։ Նրա աշխարհայեցողութեան այս հակամիլիտարիստական գիծը շեշտուած կերպով երևան է գալիս նրա ամեն մի գրուածքում, մանաւանդ „Սիրաք և Սամուէլ"-ի մէջ։

1) Սիրաք և Սամուէլ, էջ 178.
2) Նոյն տեղը, էջ 204.

Digitized by Google

* * *

Բայց վերջերս Անգլիայում հայերէն և անգլերէն՝ լոյս տեսաւ Խրիմեանի մի ձեռագիր չափածոյ գրուածքը, մի սիրուն պօէմ, որ գերազանցապէս հակամիլիտարիստական է, ուղղուած յատկապէս աշխարհի անիրաւ իշխողների և աւերիչ սպառազինման դէմ։ Այս գրուածքի վերնագիրն է "Թագաւորաց ժողով, գրուած 1900 թուին, Էջմիածնում։ "Մի օր նա (Խրիմեանը) տուաւ ինձ մի ձեռագիր՝ասելով. ,, այս այժմ կարող չէ լոյս տեսնել մեր օրհնեալ Ռուսիայում, առ հետդ, գուցէ հրատարակես զայն մի օր ձեր ազատ Անգլիայում։" Ահա ինչ է ասում ,,Թագաւորաց ժողով,,-ի հրատարակիչը, Տօնապետեանը[1]։

,,Թագաւորաց ժողով"-ը մի մարգարէական գրուածք է Խրիմեանը մարգարէանում է ներկայ-օրերը։—Աշխարհի բոլոր վեհապետները նստած են վեհաժողովի և խօսում այն մասին, թէ ,,ով հանգիստ քուն ունի գիշերը"։ Անգլիայի վեհապետը, ,,մեծ տիրապետն ովկիանու", յիշեցնում է իր ,,ահեղ նաւատորմիղը" որ ,,անպարտելի է ի ծովին և ովկիանոսն է իր պարիսպ,.։ Եւ այդ պատճառով անուշ է նրա քունը։ ,,Գերմանիայի ,,խրոխտ ինքնապանծ կայսրը" յիշեցնում է իր ,,կրթեալ զինուորութիւն, անպարտելի ահեղ բանակ ,,և նրա ,,քնաքանն է կրուպի թնդանօթ"։ Ռուսաստանը առաջ է քաշում իր

The Meeting of the Kings by Khrimean, the Katholikos of all armenians, London, 1915 թ. էջ 24.

Digitized by Google

կոզակներին և նրանցով սպառնում։ Բայց ,,Ռուսիայի վախը, նկատում է Խրիմեան, արևելքից է, Չինաստանից, Եապոնիայից»։

Ապա խօսք է առնում Թիւրքիայի վեհապետը, սուլթանը. — ,,ձեռք նորա յամենեսին, ամենեսուն ձեռն ի նա»։ Երանով է սկսում նա և հարցնում.

Ո՞վ թագաւանդ իշխանք երկրի,
Գիտէք արդեօք պատգամին միտք,
Ձեր ձեռք քարշեն դիս չորս կողմէն,
Իմ ձեռք բռներ ձեր օձիքէն.
Քարշեցէք որչափ կամիք,
Եւ ես անշարժ մնամ ի կեդրոն
Ընաշխարհիկ Բիւզանդիոն.
Վայ աւուրն, որ միանաք,
Դիս մի. կողմէն քարշէք ի բաց,
Այդ յաւիտեան դուք չէք տեսնար,
Քանի դժուար է, դուք գիտէք,
Երբ խնդիր դայ բաժնի վերէն.
Որ առիւծն է և զօրաւոր,
Բաժին խնդրէ մեծ մեծ կտոր։

Հարցէք դուք այժմ, հանդիստ է քունս.
Օրհնեալ է Աստուած, խոր է իմ քուն.
Ես հաւատամ ճակատագրին.
Չունիմ գլխոյս ոսկերարձիկ,
Կամ թնդանօթ այն Կրուպի.
Բայց ես ունիմ պատրաստ բարձեր,
Ժամանակին հետևելով
Ըզմինն ընտրեմ, դնեմ գլխոյս,
Եւ ապահով ննջեմ իբուն։

Բնորոշ է այն, որ Խրիմեանը արդարութիւնը, իր խօսքը դրել է մի փոքրիկ միապետի՝ Բելգիայի թա-

Digitized by Google

դաւորի բերնում։ Նա է յիշեցնում աշխարհի մեծ իշխողներին ճշմարտութիւնը.

,,Ասացէք. ով վեհապետք,
Թէ ում վրայ է հաստատուն
Ձեր գանձ, աթոռ և տէրութիւն.
Դուք կարծում էք, թէ գանձ, աթոռ
Կարէ ինքնին կալ հաստատուն,
Եթէ չունիցի նա պատանդան
Հաւատարիմ իւր ժողովուրդ։
Աշխատեցէք, ով վեհապետք,
Ձեր պատանդան հաստատ պահել
Հաւատարիմ ժողովրդով։
Քանի որ կայ մեր այս աշխարհ,
Պիտոյ է միշտ աշխարհավար,
Թագաւոր ժողովրդին
Եւ ժողովուրդ՝ թագաւորին։
Արդ ես ասեմ, ինչ է իմ բարձ,
Գուցէ խնդաք և զարմանաք.
Ժողովրդի սիրտն է իւր բարձ,
Բելճիոյ հեզ թագաւորին
Ուր ես գլխիկս դնեմ խաղաղ։
Ցանկալի է, յոյժ ցանկալի,
Խաղաղութիւն մեր աշխարհին,
Խաղաղութիւն թագաւորաց,
Խաղաղութիւն ժողովրդին.
Հերիք այսչափ մեծութեան տենչ,
Բաւ և շատ է, սահման դրէք.
Հերիք անթիւ զէնք ու բանակ,
Զինուորական տուրք անքանակ. . .
Աղգեր ողջոյն հեծեն ողորմ,
Բողոքում են մինչև յերկին. . .
Բաւ է, դրէք սուրն ի պատեան,
Ողջունեցէք խաղաղութիւն։

Digitized by Google

Բելգիայի թագաւորի խօսքից յետոյ, աշխարհի բոլոր վեհապետները ոտի են ելնում և ասում.

«Կեցցէ, ասեն, Բելճիոյ թագ.
Նա բան խօսեց ճշմարտութեամբ,
Աւետարան էր իւր բերան. . .
Բայց մենք զառնանք ի մեր բան։

Աւելի մէջբերումներ, քան այս չափ, անկարող էի անել։ Կարծում եմ այսքանն էլ պարզ գաղափար է տալիս Խրիմեանի այս վերջին ուշագրաւ աշխատութեան բնոյթի մասին։ Անկասկած, այս գրուածքը ոչինչ նոր բան չի տալիս և ոչինչ չի աւելացնում Խրիմեանի փառքի և անուան վրայ։ Նա առանց այդ երկի էլ մեծ էր, և մանաւանդ այս գրուածքի ոգին նոյնն է, ինչ նրա նախկին գրուածքների։

* * *

Այսպէս, ամբողջ աշխարհում թշուառութիւնը համատարած է։ Այսպիսի պատկեր ունի աշխարհը Խրիմեանի համար։

Բայց ո՞վ է այդ համատարած թշուառութեան բուն պատճառը։—Մարդն է այդ։ Մարդը չարին հակամէտ է։ Աւելին։ Մարդը ոճրամէտ է. նա „չարաստեղծ և չարահնար է։“ Մարդն իրրև հեղինակ իւր սրտին գործարանին մէջ կստեղծէ զչարն և կհանէ ի դուրս, և սա է թշուառութեան աղբիւրը։“ [1]) „Խառնարոյս կաճին» աշխարհ-ագարակի մէջ՝ ծաղիկներ և փուշեր, այսինքն՝ երջանկութիւն և ապեր-

1) Սիրաք և Սամուէլ էջ, 160

ջանկութիւն։ Եւ այդ բոյսերի մշակը մարդն է։ ,,Աշխարհիս մեծ պատահարներ՝ մարդիկ են և նոյնիսկ մարդն է մարդուն պատահար։ Մարդոյն կենաց մէջ պատահարն ու պատիժը՝ դարձեալ նոյն ինքն մարդն է,,։[2]) Այս «երկվտակ հոսանքներ՝՝, չարութիւն և բարութիւն, դժբախտութիւն և երջանկութիւն կրծաւալեն մեր ընկերային կեանքի վրայ։ Նրանք ,,համընթաց՝՝ են և ,,զուգածին՝՝ եղբայրներ։

Մեր աշխարհի կարգն է այս սկզբից ի վեր, և այսպէս պիտի տակաւին շարունակի։ Խրիմեանը չի հաւատում աշխարհի և մարդկութեան արագ վերածնունդին։ Նա չի հաւատում, որովհետև մարդը դեռևս մի ,,անհալ և անկատար հանք է՝՝։

Բայց նա հաւատում է աշխարհի վերջին վերածնունդին։—Նա իր մի նամակում, գրած 1877 թվին, մարտի 10-ին պատերազմի միջոցին, ներկայացնում է դրութիւնը և տալիս մարդկութեան վերածնունդի պատկերը։ Խիստ իմաստալից և բնորոշ է այդ նամակը։ ,,Քաղաքային մթրիկ մի է այս և կանցնի շուտով. խաչի, զոհի ոնձնուիրութեան ժամանակ է, ժողովուրդ, ազգեր և աշխարհ արեան գետեր պիտի անցնեն, կարմրին սրուկներ։ Այս աշխարհիս ճակատագիրը ջուր և արիւն է. երկուքն ևս պէտք են, զի երկուքն ևս մարդոց մեղքեր կը լուանան։ Ամեն ժամանակ իւր Մովսէսն ունի. մարդիկ պէտք է կարմիր ծովէն անցնեն և մկրտուին՝՝։ Խրիմեանը հաւատում է, որ կրգայ ժամանակ, երբ հարաւոր կլինի ,,խցել չարին ակն, որ չարութիւն չբղխէ, և բանալ

2) Սիրաք և Սամուէլ էջ, 182-190.

բարոյ ակն, որ բարութիւն բղխէ՝՝։ Իսկ այդ նպատակի համար պէտք է կուել մարդու դէմ, քանի որ նա է ,,մարդոյն մեծ պատահարը՝՝։ Նա ընդունում է, որ ,,երկրի բնական փուշեր հնազանդ են մարդոյն, և մարդ կարող է զանոնք արմատով քանդել և վերջը ծաղիկներ տնկել»։ Մարդը ծնելիս ոչ բարի է և ոչ չար, հետևապէս կարելի է նրան ցանկալի ուղղութիւն տալ և մեր ուղածի նման դաստիարակել։

Բայց ինչ է ,,դարման այս մեր հիւանդոտ և թշուառ աշխարհի՝՝։ Ի՞նչ միջոցներով հնարաւոր է բուժել այս աշխարհը։ - Դաստիարակութիւնը, գիտութիւնը և քաղաքակրթութիւնը մէկն է այդ միջոցներից, և՛ զօրաւոր միջոցներից։ Բայց դաստիարակութիւնը միայնակ անզօր է այդ չարիքի դէմ, որ «անչափ հին և խորարմատ» է։ Խրիմեանը չի հաւատում դաստիարակութեան այդ անօրինակ ոյժին. նա չի հաւատում, թէ այդ հրաշքը, — մարդու «չարութեան ակն խցել կարող է միայն մարդու ձեռը արհեստաւորէ»։ Նա հաւատում է այդ հրաշագործութեանը այն դէպքում միայն, եթէ «մարդոյն դաստիարակող ձեռքին հետ աւետարանի ոգին և ընկերութեան ձեռքն ևս հրաշագործէ, յայնժամ կհաւատամ, թէ մեր ընկերական կեանք կրծազկազարդի և կ՚ազատի չարութեան և թշուառութեան փուշերէն»։ Խրիմեանը հաւատում է, որ շիտակ կրթութիւնը և գիտութիւնը լոյս կրմտցնի այս աշխարհ, երբ «աւետարան, ընկերսիրութիւն և միաբան զօրութիւն» կրթազաւորէ աշխարհում, երբ, կարճ, բնական և բարոյական հիմունքների վրայ կըդրուի աշխարհը, մարդկային կեանքը։ Աշխարհը խախտ-

Digitized by Google

ել է, աշխարհը շեղել է բարոյական և բնական օրէնքների ճամբից։ Բարոյական և բնական հիմունքների վրայ պէտք է դնել բովանդակ ընկերային շէնքն—ընտանիք, պետութիւն, դաստիարակութիւն, քաղաքակրթութիւն։ Նա ընկերային կեանքին մեծ նշանակութիւն է տալիս—ընկերային միջավայրումն է ամեն ինչ աճում, մարդը զարգանում։ Մարդը դառնում է մարդ ընկերային կեանքում, առանց դրան նա ոչինչ է։

Աշխարհը շարժող ոյժերը, ազդակները շատեն։ Նիւթականը զօրաւոր ազդակ է։ Բայց միակը չէ։ Նիւթականի, տնտեսականի հետ բարոյականն ևս մեծ գործօն է։ Ըստ Խրիմեանի, աշխարհը մարդուն տրուած չէ միայն որպէս նիւթական կեանք՝՝, որպէսզի մարդը վայելէ միայն երկրի բարիքը։ Մարդու մեծ կոչումն է և այն, որ «նիւթականի հետ կապէ բարոյական կեանք„։ Մարդն աննպատակ ծնած չէ։ Նա աշխարհ գալով, ունի իր կոչումը, բարոյական կոչումը՝ մարդկութեան հանդէպ։ Այս երկուսը, բարոյական և նիւթական կեանքը, անբաժանելիօրէն կապուած են իրար հետ։ Եւ այդ կազմում է Խրիմեանի աշխարհայեցողութեան ընորոշ գծերից մէկը՝ առողջ և գիտական։ "Անհնարին է, ասում է նա. հացն ու բանն որոշել իրարմէ. նորա այն չափ սերտ կապակցութիւն ունեն իրարու հետ, ինչպէս հոգին մարմնոյն հետ՝՝։ „Եթէ միայն նիւթական կեանքիդ համար հացի պէտքեր հոգաս ու մոռանաս Աստծոյ բան և բարոյական պէտքեր, դու յայնժամ թերահա-

Digitized by Google

ատ և նիլիմապաշտ կլինես՝՝։[1]) Իսկ նա դէմ է նիլիմապաշտութեան։ Նրա աչքում երկու կողմն էլ հաւասար արժէք ունեն, մէկն առանց միւսի թերի է և սխալ։

Ո՞ր է բարոյական հիմունքը—սէր, հաւասարութիւն, արդարութիւն, եղբայրութիւն, միութիւն և ընդհանուր մարդասիրութիւն։ Ահա Խրիմեանի պատասխանը։

Աշխարհի միւս հիմքը կազմում է բնական օրէնքը։ Ինչ է թելադրում այս օրէնքը։—Մարդիկ բնութիւնից ազատ են, մարդիկ ,,հաւասար կծնին, հաւասար կմեռնին, բայց անհաւասար կապրին՝՝։[2]) Նրանք պէտք է նաև հաւասար ապրին. այս է բարոյական և բնական օրէնքի թելադրութիւնը։ Այստեղ Խրիմեանը դնում և պաշտպանում է բնական իրաւունքի սկզբունքը, որի տաղանդաւոր տեսաբանն է Ժան-Ժակ Ռուսսօն։ Խրիմեանը չի ընդունում, թէ բնութիւնից է անհաւասարութիւնը, թէ բնութեան օրէնքն է, որ զօրեղները ճնշեն թոյլերին։ ,,Մի հաւասար, ժողովուրդ. այդ վարդապետութիւնը սիրապետաց ոգին ստեղծեր է, մարդասէր և արդար Աստծուն չէ, որովհետև ընդհանուր մարդկութեան կոչումը և կեանքն՝ ազատութիւն, արդարութիւն և հաւասարութիւն է երկնից առաջ և աշխարհիս բազմակրթութեան օրինաց առաջ ,,2)։ Աստուած մարդկանց հաւասար է ստեղծել, ,,հաւասար ազնուական՝՝։ ,,Միայն աշխարհին աչք ու դա-

1) Սիրաք և Սամուել, էջ 178.
2) էջ 33.

տաստանը խոտիր կդնէ և այնպէս կտեսնայ''։ ,,Կը գովեմ կրկ. եթէ անձնաճանաչ լինելով խոնարհամտիս, այլ չեմ ներեր քեզ, թէ անչափ նաստանաս, մինչև մուտանաս մարդկութեան հաւասար պատիւ''[1]։ Մարդն ապատ է, նոա պարտաւոր է ամեն գնով պաշտպանել իր մարդկային պատիւը և արժանաւորութիւնը, իր մարդկային իրաւունքները։

Այսպէս, այդ երկու օրէնքները, բարոյական և բնական, անբաժան են միմեանցից։ Խրիմեանը կեանքում, իր գործունէութեան ընթացքում միշտ էլ այդ է քարոզել, այդ ուղղութեամբ է ազդել կեանքի վրայ, բարքերի անցնացման վրայ։

Ահա մի բնորոշ դէպք նրա կեանքից։ 1893 թուին էր, երբ նա կաթողիկոսացած ճանապարհում էր Էջմիածին։ Երբ ժամանում է Երևան, նրան, ի միջի այլոց, շրջապատում են նաև Երևանի քահանաները՝ շքեղ հագնուած։ Այս երևոյթը դրաւում է պարզասէր Խրիմեանի ուշադրութիւնը և նկատում է.

,,Այդ ինչ փառաւոր ֆարաջայ ունես, տէր հայր, ես ինքս այդպիսին չունեմ։ Աւելի լաւ չէր լինի արդեօք, դրա վրայ ծախսած փողերով հոգայիք ձեր ընտանիքը, կրթութիւն տայիք ձեր որդոց... Փողէր այդ ծաղկեայ գլխանները։ Այսօրուանից հագէր պարզ, հասարակ, սև գլխաններ։ Մտածեցէք աւելի գարդարել ձեր ներքին, մտաւոր և բարոյական կողմը, դրսի զարդարանքը մի կողմ թողնելով''[2]։

---

1) Ժամանակ և խորհուրդ իւր, էջ 36.

2) Սիրաք և Սամուէլ էջ 82.

Digitized by Google

*
* *

Այդ բնական և բարոյական օրէնքներով պէտք է ղեկավարւի նաև երկրի իշխանութիւնը, դրանք պէտք է կազմեն պետութեան հիմքերը։

Նա առհասարակ դէմ չէ իշխանութեան. նա գտնում է այդ անհրաժեշտ։ „Իշխանութիւն ժողովրդին և ժողովուրդ՝ իշխանութեան միշտ պէտք են աշխարհիս վրայ։ Եթէ մին կամ միւս պակսի՝ կդադարի կամ կիսատրի ընկերվարութեան կեանքը“։ Բայց իշխանութեան մեծ և նուիրական պարտքը է „արդարութիւն սիրել և օրինաց իրաւացի վճիռը արդարութեամբ ի գործ դնել“։ Նրա պարտքն է երկրի խաղաղութեան վրայ հսկել, „հանապազ հոգալ ժողովրդի բարօրութեան, բարգաւաճման և յառաջադիմութեան համար“։ Մի իշխանութեան զօրութիւնը և հաստատութիւնը՝ արդար և հաւասար օրէնքն է։ Իշխանութեան սրբազան պարտականութիւնն է օրէնքը „ճշմարիտեամբ հաւասարապէս գործադրել ակարին և զօրաւորին վրայ, իշխանին և ժողովրդին վրայ“։[1]) Մի երկու էջ յետոյ. Խրիմեանը նկատում է. իշխանութեան „առաջին և վերջին մեծ պարտիքն է լոյս, գիտութիւն և կրթութիւն տարածել ընդհանուր երկրին մէջ, իշխանութիւնն սկսեալ մինչև խոնարհ ժողովրդի իրաւիքը՝ հաւասարապէս լոյս ծաւալել, հաւատալով, որ երկրին բարգաւաճանք ժողովրդին լուսաւոր կրթութիւնէն կծնի, ինչպէս թշուառութիւնը՝ նրա տգիտութիւնէն“։[2]) Մի

1) Ս. և Ս. էջ 46.
2) Նոյն էջ 56—60.

Digitized by Google

բնորոշ կէտ ևս, որով աւելի ևս պարզուում է Խրիմեանի հայեացքը պետութեան և կառավարութեան պարտականութեան մասին։ Ահա այդ կէտը-,, ինչ որ իշխանութեան պարտիքն է, այն է ահաւասիկ ժողովրդին իրաւունք, և ինչ որ իշխանութեան համար իրաւունք է, այն է տիրապէս ժողովրդին պարտիք'' (էջ 60)։

Խրիմեանը դէմ է այն իշխանութեան, որ դեկավարւում է այս յոռի և յետադէմ տեսակէտով—,, ժողովուրդը տգիտութեան և անդգայ թմրութեան մէջ պահել, որպէսզի նա կոյր մնայ և չանսասանէ իշխանութեան դէմ''։ Նա դէմ է այն իշխանութեան, որ ,,դատաստանի առաջ նուիրական չի համարի օրինաց հաւասարութիւն և կթողու, որ դատաւորաց կամք՝ դատարանին մէջ իբրև օրէնսդիրք վճռէ''։ Առհասարակ նա դէմ է այն իշխանութեան, որ չէ հիմնուած բարոյական և բնական բարձր օրէնքների վրայ։

Այդ բնական և բարոյական օրէնքների կարգից բղխում է նաև մի այլ էական, բարձր սկզբունք, այն, որ իւրաքանչիւր մարդ սրբական իրաւունք ունի իր սեփական աշխատանքի վրայ. և նա պէտք է ազատապէս վայելէ իր աշխատանքի պտուղը։ Իւրաքանչիւր բանական կառավարութեան մի պարտականութիւնն էլ այն է, որ ապահովէ ժողովրդի հալալ վաստակը և որ նա կարողանայ ազատօրէն վայելել իր վաստակը. կառավարութիւնը չպէտք է թոյլ տայ, որ հարուստը ,,կռփէ և հարստահարէ ժողովուրդը''։

Այսպէս ահա մի շարք գործոններ՝ դիտութիւն

Digitized by Google

և լոյս, աշխատանք և հոգ, հաց և բան, նիւթական և հոգեկան՝ կապած են իրար հետ և ազդում են կեանքի վրայ միասին։

Այսպիսի գործոնների շնորհիւ միայն հնարաւոր է կատարել այն ,,հրաշքը"— վերացնել ,,թշուառութեան փշերը" և զարգացնել միայն ծաղիկներ, մարդկային վերածնունդը։ Բարոյական բնական կարգերը և ճշմարիտ կրթութիւնը կատարում են միասնական աշխատանք մարդկութեան վերածնունդի, հին աշխարհի յեղաշրջման ճանապարհին։ Նա առհասարակ մեծ տեղ է տալիս քաղաքակրթութեանը աշխարհի բարեփոխութեան մէջ։ Նրա խօսքը, իհարկէ, վերաբերում է ճշմարիտ, շիտակ քաղաքակրթութեան՝ լոյս և գիտութիւն։

*
* *

Վերև շօշափած խնդիրների հետ սերտօրէն կապած է մի հարց ևս—Խրիմեանի վերաբերումը դէպի Սահմանադրութիւնը։

Խրիմեանը հակասահմանադրական է։ Բայց գիտենք, Միդհատ փաշայի սահմանադրութիւնը մեծ խանդավառութեամբ ընդունեց Խրիմեանի կողմից։ Իսկ ինչո՞ւ է դէմ, ինչպէս բացատրել նրա բացասական վերաբերմունքը։— ,,Ցաւ երկունք կալաւ զինքն իբրև ծննդականի (Տաճկաստան). երկնեց, երկնեց և այսօր ծնաւ մեզ համար մի նորամանուկ Սահմանադրութիւն"։ Եւ ողջունում է նա ժողովրդին, աւետիր տալիս։—,,Ցնծացէք, ստրուկ ժողովուրդ, ցնծացէք և ողջունեցէք այս նորածին մանուկ"։ Ո՞վ սահմանադրութիւն, պիտի կարճեմ այնուհետև

Digitized by Google

այն հարստահարող կողոպտիչ ձեռք, որ հողագործին եղները լծերէն չարձակին և մանկայ սրահար առնելով՝ արիւն և արցունք վագին իւր վարած ակօսներու մէջ, ուր պէտք է ցորենահատեր ցանէին, հաց բուսնէր։ Ով Սահմանադիր օրէնք, պիտի կարճէք այսուհետև կաշառակուռ դատաւորաց ձեռք, որ պատրուակով չխաղան քեզ հետ"[1]...

Խրիմեանը տարակուսում է, նա չի հաւատում, թէ Սահմանադրութիւնը կարող է վերացնել հարստահարութիւն, ճնշում, բռնութիւն։ Նա կասկածում է, թէ Սահմանադրութիւնը կարող է երկրում մտցնել իրաւահաւասարութիւն, թէ Սահմանադիր օրէնքը կընդունի բոլորի կողմից հաւասարապէս, ամենքի մէջ յարգանք կներշնչի և խոր արմատներ թիւրքական իրականութեան մէջ։ Նա տարակուսում է, որովհետև մտածում է, ,,թէ ինչպէս Սահմանադրութիւնը պիտի շրջի մեր մութ և աներևոյթ աշխարհին մէջ"։ Նա գիտէ, որ ,,լոյս, գիտութիւն և դաստիարակութիւն միշտ առաջնորդաց կարապետ են" սահմանադրութեան, սահմանադրական ազատ կարգերի։ Մինդեռ այժմ Սահմանադրութիւնը գոյիս է մեր աշխարհը առանց այդ կարապետի։ Նման դէպքում նա անպայման խարխափելով պիտի շրջի մեր երկիրը։ Եւ այդպէս էլ եղաւ իրականութեան մէջ։ Միդհատեան Սահմանադրութիւնը խարխափելով մտաւ երկիր և շատով էլ մեռաւ, լինելով անժամանակ ծնած, առանց առաջնորդաց անհրաժեշտ քաղաքակրթական դրութեան։

Ահա այս տեսակէտով էր Խրիմեանը համարում հակասահմանադրական։

1) Ժամանակ և խորհուրդ իւր, էջ 24-25։

Digitized by Google

IV

Հայ ընտանիքը և նրա հիմքը.—Նրա ներկայ պատկերը.— Դրախտի ընտանիքը՝. Դեպի յետ.—Կնոջ դերը։

Հայ ժողովրդի համար նկարում է հայոց Հայրիկը ,,Դրախտի ընտանիքը՝՝։ Ինչ է ներկայացնում այդ իրենից։ Մեր բարոյագէտին չի զբաղեցնում ընտանիքի ծագման հարցը, ոչ էլ նա տալիս է ընտանիքի զարգացումը կամ քննադատում այդ ինստիտուտը։ Խրիմեանը նկարում է միայն այն ընտանիքի պատկերը, որ նրա ցանկացածն է, դրված ճշմարիտ, բնական և բարոյական հիմունքների վրայ։ Այստեղ էլ նոյն ընդհանուր տեսակէտն է, ինչ մինչև այժմ տեսանք։

Ամուսնութիւնը, ըստ Խրիմեանի, բնական օրէնք է, նա մարդու բնութիւնից անբաժան է։ ,,Ամուսնութեան օրէնքը մարդկութեան հիմքն է, բնութեան մէջ խորապէս հաստատուած և ոչ մի ձեւը չի կարող խախտել, և եթէ խախտի, մարդ իւր կեանքովը կը-չքանայ՝՝։ Իսկ ընտանիքի հիմքը, ամուսնութեան

Digitized by Google

բուն օրէնքը բնական սէրն է։ ,,Բնական սէրն է միայն. ասում է Խրիմեանը, բոլոր բնութեանց կենդանատու հոգին և զօրութիւն, եթէ չկենդանացնէ սէրը՝ բնութիւնը կմեռնի։ Հզօրագոյն է սէրը երկու ամուսնաւոր սիրելեաց մէջ. երկու շնչով կշնչէ, երկու սրտով կմիանայ, երկու լեզուով կխօսի, երկու սրտով կմիանայ, երկու լեզուով կխօսի, երկու ոգւով կապրի երկու ձեռքով կգործանայ եթէ մին պակսի սէր կմեռնի, զի սիրոյ կեանքը երկու սրտից միութիւն է''[1]) Այր և կին ներկայանում են ամոլակիցներ, հաւասար ընկերներ և աշխատակիցներ կեանքում։

Այսպէս. ընտանիքի հիմքում պէտք է դրուած լինի բնական, բարոյական և բանական օրէնքը։

,,Ծանիր զքեզ'' Խրիմեանը այս իմաստուն առածը ընէ առաջարկում դրած ունենալ ընտանիքի ,,սրահի սիմոց'' վրայ, որպէսզի երբէք չմոռացուի, այլ միշտ աչքի առաջ լինի, կեանքի մէջ առաջնորդող գաղափար հանդիսանայ։ Այդ իմաստութիւնը թելադրում է լինել ,,խոհական. վայել, բնական և բանական կեանք, լինել համեստ. չափ ու սահմանները գնել տնտեսական կառավարութեան վրայ, հացը չափով ուտել, հանդերձը չափով հագնել։ Այս պէտք է լինի առաջնորդող ճշմարտութիւնը մարդը մի անգէտ մանուկ է, կվազէ միշտ դէպի սիրուն խաղալիկները''։[2])

Հայոց Հայրիկը ցաւով է նկատում, որ հայ ընտանիքը հեռացել է այդ շաւղից. ցաւով նկարում և

1) Դրախտի ընտանիք էջ 119.
2) Նոյն տեղը,

Digitized by Google

դիտում հայ ընտանիքի հիւանդ և հիւծուող կերպարանքը։ Եւ նրա այդ գրուածքի, «Դրախտի ընտանիքի» նպատակն է ցուցադրել հէնց հայ ընտանիքի այդ հիւանդ կերպարանքը, որ՝ ինչպէս հայելի՝ հայ ժողովուրդը դնի իր աչքի առաջ և նայի։

Բայց նա միայն դրանով չի բաւականանում։ Նա ցոյց է տալիս նաև բուժելու ճամբան, դարմանելու միջոցները։ Հայ ընտանիքի մէջ մտել են մի շարք մոլորութիւններ, զեղխութիւն և ցոփութիւն, նորասիրական պերճանքներ... Եւ ցաւալին այն է, նկատում է Խրիմեանը, որ այս բոլորը մտել են հայ ընտանիքը որպէս քաղաքակրթութիւն։ Նախնական բնական և մաքուր վարքն ու բարքը, ընտանեկան սրբութիւնը վերացան և մարդիկ ընկան անառակութեան մէջ։

Այս դրութիւնից դուրս գալու համար պէտք է մտցնել ընտանիքում քաղաքակրթութեան ճշմարիտ տարերքները, որ է գիտութիւն, կրթութիւն և լուսաւորութիւն։ Նա քարոզում է գնալ դէպի յետ, դէպի բնական վիճակը։ Անկասկած, ոչ յետ դէպի բարբարոսութիւն, այլ յետ դէպի բնական մաքուր կարգերը, ճիշտ Ժան-Ժակ Ռուսսոի իմաստով։ Մեղք է բնական օրէնքին դէմ, ինչպէս և միանգամայն անհանդուրժելի է համարում նա այն հիւանդոտ երևոյթը, որ մայրը, թէև ստինքները լի կաթով, իր մանուկին յանձնում է օտար կաթին և օտար գրկին։ Նա արժանի չէ մայր կոչելու. ,,մայրը մի կարող չէ ոչ ոչ պարտիքն զեղծել, զոր թէ բնութեան

օրէնք և թէ բնական սէր՝ անեղծ գծեր են մօր սրտին և կուրծքին վրայ“։ Վերջապէս, բնութեան անփոփոխ օրէնքն է այդ պարտիքը դրել մօր վրայ։

Կինը մեծ դեր և արժէք ունի կեանքի մէջ, յատկապէս ընտանիքում։ Ըստ Խրիմեանի, կինն ևս այր մարդու հաւասար է և հաւասար ընդունակ առաջադիմելու, մարդկութեան օգտակար լինելու։ Բայց նրա աշխարհը գլխաւորապէս ընտանիքն է. ընտանեկան դաստիարակութիւն, կրթութիւն և տնտեսութիւն առանին կառավարութեան։ „Մայրերն են միակ առաջին վարժապետ և կրթիչ իրենց զաւակներու՝ հաւասարապէս թէ աղջիկների և թէ տղաների“։ Խրիմեանը իր գործունէութեան ընթացքում միշտ էլ ուշադրութիւն է դարձրել օրիորդաց կրթութեան վրայ։ Եւ այդ այն տեսակէտից էր նա անհրաժեշտ գտնում, որ մայրերն են երեխաների առաջին դաստիարակները։ Միայն զգլոցական ուսումը անբաւարար է, առաջնակարգ կարևորութիւն ունի նաև ընտանեկան ազատ ու բարոյական դաստիարակութիւնը։

Digitized by Google

V

,,Ժամանակ և խորհուրդ իր'' — Ժամանակի թէորիան և պրոգրէսի գաղափարը. — Ժամանակը և մարդը. — Խրիմեանի հասարակական իդէալը։

— —

Աշխարհը, ներկայ աշխարհը վատ է, ունի շատ յոռի կողմեր։ Ներկայ աշխարհի վրայ թշուառութիւնը համատարած է, մարդիկ ունին անթիւ մեղքեր, նրանք մշտապէս իրար բղկտում են, ծուիկ-ծուիկ անում՝ նիւթական շահի յետևից վազ տալով։ Ներկայ ընկերային կեանքը վիրալից է, իսկ այժմեան քաղաքակրթութիւնը շիտակ և ճշմարիտ չէ։

Այս չափով մեր բարոյապէտը յոռետես է, նրա կենսահայեցողութիւնը՝ յոռետեսական։ Բայց նա հաւատում է, որ աշխարհն այսպէս չի կարող շարունակուել. նա հաւատում է խորապէս, որ ամեն ինչ փոխուելու է, և փոխուելու է դէպի լաւը, դէպի ազնիւը և բարձրը։ Այդ շունչն է փչում նրա իրաքանչիւր բարոյաղիտական գրուածքից։

Մեր իմաստասէրը տալիս է մի ամբողջ և իրայատուկ տեսութիւն ժամանակի մասին։ Ժա-

Digitized by Google

մանակի տեսութիւնը սերտօրէն կապւած է պրոգրէսի գաղափարի հետ։ Նա ճանաչում, ընդունում է պրոգրէս մեր աշխարհում, մեր ընկերային կեանքում, ազգերի պատմութեան մէջ։ Այդ պրոգրէսն անհրաժեշտ է և անխուսափելի, թէև տեղի է ունենում դանդաղ և ծանր երկունքով, թէև ընթանում է դանդերի և ազգերի վրայով։

Ժամանակը մի հզօր և հուժկու ոյժ է։ Ժամանակը ամենակարող է։ Ժամանակը մեծ աշխարհակալ է ,,աշխարհի բոլոր գահերու, բոլոր թագերու վրայ''։ Ժամանակը բոլոր մարդկանց ,,միահամուռ կը վարէ դէպի գերեզմանին վիհը''։ Ժամանակը հանուր մարդկութեան գործերի մեծ դիւանապետն է, նա է արձանագրում մարդկային կեանքի հաշիւը, ինչպէս և բոլոր թագաւորների հաշիւը։ Ժամանակը մի աւերիչ ոյժ է. նրա ոյժի տակ ամեն ինչ ջախջախւում, փշրւում, տրորւում է։ Եւ ինչու. որովհետև նրա կառքի անիւները կարծրակուռ երկաթէ են և ժանիքները պողպատէ։

Բայց, միւս կողմից, ժամանակը նաև յեղափոխիչ-ստեղծագործական ոյժ է։ Նա մի կողմից աւերելով, ոչնչացնելով հինը, վատը և յոռին, միւս կողմից ստեղծագործում է նորը, ազնիւը և բարձրը։ Ժամանակը խորտակելով հինը, դիմում է դէպի բնական և բարոյական կարգերը, դէպի ճշմարիտ քաղաքակրթութիւնը։ Մի տեսակ դիալեկտիկական պրոցէս է այդ, որ անընդհատ կատարւում է։

Մարդն մարդուն գայլ. մարդն է աշխարհի համատարած թշւառութեան բուն աղբիւրը։ Նա ինքն

Digitized by Google

է իր սեփական թշուառութեան հեղինակը։ Նա է աւերիչ, սպանիչ գործիքներ հնարում՝ միմեանց ոչընչացնելու համար։ Այդ բոլորը նա անում է գիտակցաբար կամ անգիտակցաբար։ Բայց այդ ամենը ոչինչ են ժամանակի ոյժի առաջ։ Մարդն անզօր է ժամանակի հանդէպ։ Վերջնական յաղթանակը պատկանում է ժամանակին։ Վերջիվերջոյ, թէև դարերի ընթացքում, յաղթական ժամանակը պատերազմին քանդող ձեռքը կարճելով, կընդարձակէ խաղաղութեան և յառաջադիմութեան ձեռք, և սա է հէնց ժամանակի ,,գործ և խորհրդանշան, որ աշխարհս քակելով և շինելով միշտ կառաջադիմէ, անշուշտ ամենն հնութիւն ալիսի քանդի։ Մեր աշխարհում դեռ ևս ամեն բան ելերուն է և անհաստատ, և ինչոր ,,ազատամիտ հերոսներ'' աշխատում են մի ձեռքով շինել, ,,խտրութիւն, հնութիւն և նախապաշարմունք միւս ձեռքով կը քանդեն''։ Բայց նա չի ցաւում, որ քանդում են, և նրա հաւատը լաւագոյն ապագայի վերաբերմամբ մի վայրկեան անդամ չի խախտում։ Եւ ինչու. – ,,Քանդողները միշտ աւերակաց տակ կը մնան, գերեզման կը ծածկէ դիրենք և նոր-նոր շինողներ կծնին''։ Հէնց սկզբից ի վեր այս է աշխարհի դործը, էական կողմը – մարդիկ միշտ շինելով և քանդելով առաջ կերթան։ Բայց վերջնական յաղթութիւնը ,,շինողներուն է''։ Իսկ ինչու. որովհետև նրանց դործիքներն են գիտութիւն, քաղաքակրթութիւն և արդարութիւն, իսկ քանդողների՝ տգիտութիւն և հնութիւն։ Մէկի առաջնորդն է լոյս և գիտութիւն, իսկ միւսի՝ խաւար, մէկի իշխանութիւնն

Digitized by Google

է ազատ օրէնքը, իսկ միւսի՝ սուտը, բռնութիւնը։

Այս պատասխանը, ուր կայ ամբողջ մի հասարակական թէօրիա, վերին աստիճանի բնորոշ է Խրիմեանի աշխարհայեցողութեան համար։ Ամեն տեղ նա յանգում է միենոյն եզրակացութեան, միենոյն լուծման։ Այսպէս, երկու տեսակի ոյժեր՝ քանդող և շինող՝ մշտապէս յաջորդում են իրար ազգերի կեանքում, պատմութեան մէջ։ Բայց յաղթանակը շինողներին է և հետևապէս, ժամանակի առաջխաղաց ընթացքը, մարդկութեան պրոգրէսը ապահոված է։ Դրանում խորապէս համոզած է հայ բարոյագէտը։

Այդ պրոգրէսը ապահոված է ընդհանրապէս հանուր մարդկութեան, ինչպէս և մեզ՝ Արևելքի համար։—,,Ժամանակ վաղուց է, որ թողուց Արևելք և գնաց Արևմուտք։ Ժամանակ մի՛շտ յԱրևմուտս յարատև չի մնար. մի օր կդառնայ յԱրևելս և զան ևս իւր հնութիւնէն կվերանորոգվի՛՝։ (Ս. և Սմ. էջ 185).

* * *

Բայց ո՞ւր է տանում ժամանակի յարատև յառաջընթաց շարժումը, ո՞ւր է գիմում պրոգրէսը, ինչ է ապահոված շինողների յաղթանակով։ Ազգերի ճշմարիտ, իրական հաւասարութիւնը։ Ահա դէպի ուր է գիմում այդ շարժումը։ Խրիմեանի հասարակական իդէալն է այդ։ Նա հաւատում է դրան, և նա ունի որոշ հիմունքներ հաւատալու։ Նախ այդ է ասում պատմութիւնը, ազգերի պատմութեան ընթացքը և, միւս կողմից, այդ ապահոված է գիտութեան և Աւետարանի գերապանծ սիրոյ շնորհիւ։

Digitized by Google

Մեր բարոյագէտը հաւատում է, որ վերջի-վերջոյ կիսաղալեն բոլոր հակառակ տարերքները. ամեն մի ազգ ապրելու ազատ իրաւունք ունի և տեղ արևի տակ։ Ոչ ոք, ոչ մի ազգ իրաւունք չունի խախտել, բռնաբարել այդ իրաւունքը, որ սրբազան է միանգամայն։ Ամեն մի ազգ պէտք է ազատօրէն զարգանայ։ Բոլոր ազգերը կազմում են մի հզօր դաշնակցութիւն, և նրանք միմեանց հետ կապուած են մի սերտ կապով. այս կապն է անխտիր հաւասարութիւն իրաւանց և պարտուց մէջ, հաւասարութիւն երկրին օրինաց առաջ, հայրենեաց ժառանգութեան մէջ, հաւասարութիւն փառաց և պատուոյ մէջ, քաղաքացիութեան և ազնուութեան, ուսման և առաջադիմութեան մէջ։ Նա հաւատում է, որ ժամանակը բերելու է այն ոսկէ դարը, յորում գոռոզ առիւծն՝ աշխատաւոր եզին հետ բնակի, ինձն ուլին հետ մակադի, բարձր գահեր հին հպարտութիւնէն խոնարհին և ժողովուրդ ազատութիւն համբուրէ։ Եւ այդ ազատ ու հաւասար կարգերի մէջ իւրաքանչիւր ազգ պէտք է զարգանայ անկախ, ինքնուրոյնաբար և անկաշկանդ։ Հէնց այս է այն հզօր Դաշնակցութեան իմաստը։

Այս հիմնական տեսակէտը, այս բարձր մարդկային զաղափարն է միշտ էլ հանդիսացել Խրիմեանի կեանքի նշանաբանը, նրա առաջնորդը։ Նա միշտ սիրել է ուրիշին, ճանաչել և պաշտպանել նրա անբակտելի իրաւունքը։

Խրիմեանը դերազանցապէս հայ մարդ էր և մեծ հայրենասէր. Այդ անկասկած է. Նրա խոհերի, գործունէութեան հիմքը կազմում էր իր ժողովուրդը.

Digitized by Google

*
* *

Բայց Խրիմեանը միաժամանակ մեծ մարդասէր էր։ Արևելեան դէրվիշը ունէր լայն սիրտ, ունէր մտքի և հոգու մեծութիւն։ Այդպիսի մարդը չէր կարող նեղ հայրենասէր և հայասէր լինել—մի հայամոլ։ Աղնիւ հայրենասիրութիւնը և բարձր մարդասիրութիւնը մի գեղեցիկ ներդաշնակութիւն էին կազմում իր Վանի բարոյագէտի անձնաւորութեան մէջ։ Այդ տեսակէտից թերևս ոչ ոք այնպէս ամբողջական անձնաւորութիւն չէ, ինչպէս Խրիմեան Հայրիկը։ Թող նա խօսէ. ,,կուզես ճշտիւ իմանալ, ինչ է ընկերասիրութեան պարտիք, որ չափ և մինչև ուր. և ով է մեր ընկեր, միայն մեր ընտանիք, մեր ազգականք, մեր երացիք, մեր հայրենակիցներ կամ այն մարդիկ, զոր մենք կճանաչեմք։ Ոչ. Աւետարանի ընկերասիրութեան պարտէքը ընդհանուր մարդասիրութիւնն է''։ Եւ այդ պէտք է տարածւի բոլոր մարդկանց վրայ. չխտրելով երբէք ոչ ազգ, ոչ կրօնք, ոչ մեծ, ոչ փոքր, ոչ ծանօթ և ոչ անծանօթ, այլ ընկեր համարել հաւասարապէս ամէն մարդու, որ իւր նմանակից պատկեր կկրէ''։ Մի աւելի ևս գեղեցիկ, աւելի բնորոշ կտոր. ,,աշխարհիս թշուառները մի գնիր թէ ով և ինչ ազգ է. բաւական է տեսնաս թէ նոքա ևս քեզ նման մարդ են. քիչ ինչ փոյթ նրա լեզուն և կրօնը''։ Մեծ քան զայս սէր ոչ գոյ։

Նա այդպէս էլ եղել է կեանքի մէջ. նա չի քարոզել միայն, այլ և գործով ցոյց տուել։ Նա շատ լաւ գիտէր, որ գործն է մեծ առաջնորդը ու դաստիարակը և ոչ թէ լոկ խօսքը։ Խրիմեանը օգնութեան էր

հասնում ամեն մէկին, ամոքում իւրաքանչիւրի վիշտը անխտիր, առանց կրօնի և ազգի խտրութեան։ Մանաւանդ հասարակ, մշակ, աշխատաւոր ժողովրդին։ Նա տալիս էր ժողովրդին իրօք ամեն ինչ։ Նա ճշմարիտ մարդասէր և քրիստոնեայ էր։ Խրիմեան Հայրիկը մի ղոյդ դուլպա ունէր, մի հատ շապիկ։ Աւելին նա տալիս էր թշուառին, իսկ թշուառները անթիւ են մեր անիրաւ աշխարհում։

Նա այնպէս էր դրել իրեն, այնքան մատչելի, որ ամեն մէկը կարող էր խնդրել, անգամ պահանջել նրանից։ Փող ասած բանը նա չունէր։ Հայրիկի գրպանը միշտ էլ դադարկ էր։ ,,Աշխարհիս մէջ երեք մարդ կայ, որոնց գրպանը միշտ ծակ պէտք է մնայ- Սուլթան Ազիզ, Գրիգոր աղա և Խրիմեան Հայրիկ'', ասում էր նա յաճախ։

Եւ իրականութեան մէջ նա հէնց այդպէս էր։ Նա ուղղակի կոմունիստ էր, մասնաւոր սեփականութիւն ասած բանը չունէր, անկասկած նա կոմունիստ էր ոչ տեսական իմաստով, այլ իր վերաբերմամբ, գործով։ Նա դէմ չէր առհասարակ մասնաւոր սեփականութեան, թէև այդ սեփականութիւնը պէտք է լինէր այն չափով, որ չդառնար մի ուրիշի շահագործման աղբիւր և հիմք։ Մի աւելորդ կոպէկ չէր մնում Խրիմեան Հայրիկի մօտ. նա տալիս էր թշուառին, չունևորին։

Մեր բարոյագէտն այնքան մարդասէր էր, որ սիրում էր անգամ քիւրդին, այն քիւրդին, որ այնքան անիրաւութիւններ է արել հայ ժողովրդին։ Այս բանը ապացուցանող շատ փաստեր կան։ Եւ հէնց այդ

Digitized by Google

պատճառով էլ Խրիմեանը բոլորի կողմից անխտիր համակրանքի, անգամ պաշտամունքի առարկայ էր հայի և թուրքի, ասորու և քրդի։ Իրոզովիին է, որ 1879-80 թվի Վասպուրականի սովի միջոցին Խրիմեանը օգնում էր անխտիր թուրքին և քրդին։ Նա սուրբ մարդու հռչակ ունէր քրդերի մէջ։ Ահա ինչ բնորոշ դէպք են պատմում։ Խրիմեանի դէմ լարած էին շատերը մեծերից, ազատներից և ամեն կերպ աշխատում էին ոչնչացնել նրան։ Նրանք յաճախ կաշառել են քրդերին՝ Հայրիկին սպանելու համար։ Մի անգամ, երբ նա Վարագից վերադառնում էր միայնակ Վան, մի քիւրդ՝ զարհուրելի մուրճ ուզում է նրան սպանել։ ,,Երբ թշնամին հետևեց Հայրիկին, պատմում է Լինչը, և վերջ առաւ իւր հրացանն դէպի ուսն, իր անդամների բռնեցման երկիւղով, թերը ցնցուեցաւ կախարդական զառագանի պէս, և ինքն ընկաւ ծունկերի վրայ իւր գոնի առաջ, որի ակնարկներին անկարող էր եղած հանդուրժել''։

Խրիմեանը յատկապէս սիրում էր թշուառ, հոգազրկած քրդերին, որ այնպէս հալածահարուած էին, ինչպէս հայ մշակ ժողովուրդը։ Եւ եթէ նա կատարում էր վայրագութիւն, այդ գլխաւորապէս բէգերի և նրա տգիտութեան պատճառով։ Խրիմեանը անհրաժեշտ էր համարում բանալ քրդերի աչքերը, դպրոցներ հիմնել նրանց համար, գիտակցութեան բերել, որպէսզի հասկանան, թէ ով է իրօք նրանց հարստահարողը, նրանց թշնամին։

Փաստ է, որ սովից ազատելով, շատ քրդեր կամենում էին քրիստոնէութիւն ընդունել, բայց Խրի-

Digitized by Google

մեան Հայրիկը կտրուկ կերպով մերժել է։

Բայց այստեղ մի կէտ չպէտք է մոռացութեան տալ։ Խրիմեանի ընկերսիրութիւնը և մարդասիրութիւնը տարբերւում էր այն քրիստոնէական մարդասիրութիւնից, որ ասում է, թէ չարին չարով մի պատասխանիր։ Խրիմեանը դէմ էր այդ մօրալին։ Ներկայ կեանքի, ներկայ աշխարհի իմաստութիւնը չէ այդ։ Խրիմեանը, ճիշտ է, պահանջում էր ամեն մի վարմունքի մէջ լինել արդար և ճշմարիտ, ինչպէս և յարգել ամեն մէկին, որ ունի մարդու կերպարանք։ Բայց նա, միւս կողմից, անինամ է դէպի նա, ով կյանքի վերաբերել մարդկային արժանապատուութիւնը, որ կյանքին խլել քո ճակատի քրտինքի արդիւնքը, ապառնալ քո գոյութեանը և վերցրել քո խաղաղութիւնը։ Այդպիսի դէպքում պէտք է խստօրէն պաշտպանել սեփական իրաւունքը, սեփական աշխատանքը և գոյութիւնը։ Այսպէս անհնարին է ապրել այս աշխարհում։ Իբրև ազատ մարդ՝ մի ստրկանար, այլ պաշտպանել մարդկութեան պատիւ՝։ Մի թոյլ տար որ անպատուեն քեզ։ Խրիմեանը դէմ չէր, որ կողոպտուած զիւղացիք մոբիլէին բիւրդ աւազակներին։

Ահա այսպէս առողջ էր նրա տեսակէտը, որ անմիջական կեանքի իմաստութիւնն էր։

Մեր աշխատութիւնը փակում ենք Խրիմեանի խօսքերով, որ վերին աստիճանի բնորոշ են նրա անձնաւորութեան և աշխարհայեցողութեան համար։

Բերլինի պատմական Վեհաժողովից յետոյ էր, ուր ոչինչ չտացան հայերը։ Բոլոր պատմաւորները, ինչպէս և Խրիմեանը ճաշի էր հրաւիրուած։

Digitized by Google

—Մեր խնդիրը չեն կատարեր, բայց մեզի ճաշի կհրաւիրեն, դառնութեամբ նկատում է Խրիմեանը։

Նա չէր կամենում գնալ, բայց ստիպում են նրան, անյարմար գտնելով մերժումը։ Եւ նա արտասանում է հետևեալ խիստ բնորոշ խօսքերը։

—Ուրեմն, այսօր Խրիմեանը ալ դիպլոմատ պիտի ըլլայ։ Եւրոպա եկողը չի կրնար դիպլոմատութիւն չընել, որովհետև այսօր դիպլոմատիան ամեն բանի վրայ կթագաւորէ։ Կտեսնենք արդեօք այն հիանալի օրը, երբ եւրոպան ոգևորուած մարդասիրական լայն գաղափարներով, քրիստոնէական անաղարտ զգացումներով, ձեռք կը կարկառէ խեղճին, հալածուածին, ընկածին՝ առանց դիպլոմատիական հայեացքների, առանց քաղաքական յետին մտքերի, այլ զուտ մարդասիրական զգացումներից դրդուած։ Միայն այն ժամանակ քաղաքակրթութիւնը կտանի իր վերջնական յաղթանակը, երբ կը հասնի այդ օրը։ Ես հաւատում եմ որ կը հասնի։

1917 թ. Բազու

Digitized by Google

Digitized by Google

UNIVERSITY OF CALIFORNIA LIBRARY
Los Angeles

This book is DUE on the last date stamped below.

A NOV 7 1988 REC'D LD-URL

AUG 2 2 1989

Form L9–Series 4939

ԳԻՆՆ Է 2 ՂՌ.

Digitized by Google

3 1158 01296 6023

Digitized by Google

Digitized by Google